ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 90-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ երկու մենագրության հեղինակ է և երեք ուսումնական ձեռնարկի համահեղինակ:

Հիմնաբառեր. *էկոզբոսաշրջություն, բնություն, բնապահպանական վարքագիծ, էկոհյուրանոց, բնության հատուկ պահպանվող տարածքներ*

Էկոզբոսաշրջությունը պատասխանատու զբոսաշրջություն է բնության հատուկ պահպանվող տարածքներում, որը նպաստում է բնության պահպանմանը և տեղի բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Էկոզբոսաշրջությունը միջոց է, որով փորձում ենք պահպանել բնությունը, բնական ռեսուրսները, մարդկանց մեջ ձևավորել համապատասխան բնապահպանական վարքագիծ: Հոդվածում դիտարկվել են էկոզբոսաշրջության էությունն ու կարևորությունը, ներկայացվել ՀՀ-ում դրա վիճակն ու զարգացման անհրաժեշտ ռեսուրսային հիմքը: Քննարկվել են նաև էկոզբոսաշրջության զարգացման հիմնախնդիրներն ու հիմնական ուղիները:

«Էկոզբոսաշրջություն» հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 1965 թ., երբ բնապահպանական խնդիրներն ինտեգրվեցին զբոսաշրջության հետ: Այդ ժամանակ դա ներկայացվում էր որպես այցելություն հատուկ պահպանվող տարածքներ[1]: Էկոզբոսաշրջության սահմանումն առաջինը տվել է Բնության պահպանության միջազգային միության Էկոզբոսաշրջության հանձնաժողովի տնօրեն, մեքսիկացի Հեկտոր Սեբալոս Լասկուրեյնը՝ 1983 թ.. «Էկոզբոսաշրջությունը ճամփորդություն է համեմատաբար չվնասված կամ չաղտոտված բնության վայրեր, որի նպատակն է սովորել, հիանալ, վայելել բնապատկերը, դրա վայրի բույսերն ու կենդանիները, նաև այդ վայրերում առկա

[1] What is Sustainable Tourism?, Naturefriends International, Baumgartner C., Nachhaltigkeit im Tourismus: Von 10 Jahren Umsetzungsversuchen zu einem Bewertungssystem. Studienverlag: Vienna, 2008, p. 3.

մշակութային դրսևորումները»:

Էկոզբոսաշրջությունը նպաստում է բնական և մշակութային ժառանգության պահպանմանը, տեղական համայնքներն ընդգրկում դրա պլանավորման, զարգացման և գործառնության մեջ՝ նպաստելով բարեկեցության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև մշակութային և բնական ժառանգությունը ներկայացնում այցելուներին[2]:

Այսպիսով՝ էկոզբոսաշրջությունը պատասխանատու զբոսաշրջությունն է բնության հատուկ պահպանվող տարածքներում, որը նպաստում է բնության պահպանմանը և տեղի բնակչության բարեկեցության բարձրացմանը: Դրա տարեկան աճը գնահատվում է 20-30%, իսկ միջազգային զբոսաշրջության եկամուտների 10-20%-ը բաժին է ընկնում հենց էկոզբոսաշրջությանը: Այն առավել զարգացած է Ավստրալիայում, Գերմանիայում, Իռլանդիայում, Ֆինլանդիայում, Մեծ Բրիտանիայում, Հարավային Աֆրիկայի և Ասիայի երկրներում: էկոզբոսաշրջությունից ստացված տարեկան եկամուտները Կոստա Ռիկայում հասնում են 650 միլիոն, Քենիայում (ազգային պարկերի օգտագործումից)՝ 450 միլիոն, իսկ Էկվադորում՝ ավելի քան 180 միլիոն ԱՄՆ դոլարի[3]:

Էկոզբոսաշրջության կազմակերպման հիմնական նպատակներն են՝ զբոսաշրջիկներին ծանոթացնել բնության արժեքներին, ապահովել նրանց հոգևոր և ֆիզիկական ուժերի վերականգնումը, լիարժեք հանգստի կազմակերպումը բնության միջավայրում, նպաստել էկոլոգիական դաստիարակությանը և կրթությանը, բնության հետ հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, բնական միջավայրում մարդկանց վարքականոնի չափորոշիչների մշակմանը, բնության նկատմամբ պատասխանատվության զգացման ձևավորմանը:

Զբոսաշրջությունն այն ոլորտներից է, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ բնության վրա: 2019 թ. միջազգային զբոսաշրջիկների թիվն աշխարհում հասել է 1461 միլիոնի, 2030 թ. կհասնի 1.8 միլիարդի: Առհասարակ զբոսաշրջությանը բաժին է ընկնում ածխածնի երկօքսիդի համաշխարհային արտանետումների 5 տոկոսը[4], որի շուրջ 75 տոկոսը վերաբերում է ավիատրանսպորտին, 20-25 տոկոսը՝ հյուրանոցային արդյունաբերությանը: Զբոսաշրջային ենթակառուցվածքներ կառուցելիս կարող են վտանգվել էկոհամակարգերը, անտառներ հատվել, զբոսաշրջիկների ոչ կայուն վարքագիծ դրսևորելու պարագայում՝ վնասել բուսական և կենդանական աշխարհը, ոչ արդյունավետ օգտագործվել բնական ռեսուրսները: Իսկ բնությունը՝ կենդանական և բուսական աշխարհը, հենց զբոսաշրջիկներին գրավելու միջոց են, և զբոսաշրջության մեջ կարևորվում է բնապահպանությունը՝ բնության, կենսաբազմազանության պահպանությունը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ զբոսաշրջիկների մեջ սերմանելով պատասխանատու վարքագիծ բնության նկատմամբ:

Էկոզբոսաշրջության բաղկացուցիչ մասն է հյուրանոցային գործունեությունը, որն էլ, իր հերթին, վնասում է շրջակա միջավայրը: Ուստի մարդիկ, գիտակցելով դա, փնտրում են էկոհյուրանոցներ, որոնց գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա հասցված է նվազագույնի, կամ էլ այնպիսի հյուրանոցներ, որոնք վարում են ներքին բնապահպանական քաղաքականություն: էկոհյուրանոցը սովորականից տարբերվում է իր գտնվելու վայրով. այն տեղակայված է բնության մեջ: Դրանցից որոշներում բացակայում է բջջային կապը, օգտագործվում են արևային վահանակներ, վերամշակված նյութերից կահույք, տարբեր սարքեր՝ ջրի խնայողության և աղ-

[2] Québec declaration on ecotourism, https://www.gdrc.org/uem/eco-tour/quebec-declaration.pdf

[3] Костюкович В. Г., Терещенко О. А., Тенденции развития экологического туризма. Научно-методический электронный журнал «Концепт». 2017, т. 39, с. 3891–3895, http://e-koncept.ru/2017/971105.htm

[4] Transport-related CO2 Emissions of the Tourism Sector – Modelling Results, p. 12, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284416660

բարկղեր՝ աղբի տեսակավորման համար:

2006 թ. ընդունվեց «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» (ԲՀՊՏ) ՀՀ օրենքը, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները[5]: 2014 թ. սեպտեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեցին Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները[6]:

Հայաստանում ԲՀՊՏ-ների ստեղծման գործընթացը սկսվել է 1958 թվականից:

Մեր երկիրն ունի հիասքանչ բնություն, բացառիկ էկոհամակարգեր, հարուստ կենսաբազմազանություն, բնական և մշակութային ժառանգություն: Այստեղ բնության հատուկ պահպանվող վայրերը երկրի ամբողջ տարածքի մոտ 13%-ն են: Հայաստանում կան 4 ազգային պարկեր (Սևան, Դիլիջան, Արփի լիճ, Արևիկ) և 3 պետական արգելոցներ (Խոսրովի անտառ, Շիկահող, Էրեբունի)՝ 269,0 հազար հա տարածքով, 27 պետական արգելավայրեր՝ 114,1 հազար հա տարածքով[7] և 232 բնական հուշարձաններ:

Հայաստանն ունի հարուստ կենդանական և բուսական աշխարհ: 17500 կենդանիներից 300-ը և 3800 բարձր որակի բույսերից 450-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կենդանիների և բույսերի շուրջ 60%-ը հատուկ պահպանվող տարածքներում է:

2018 թ. բնության հատուկ պահպանվող տարածքներ է այցելել 412792 էկոզբոսաշրջիկ, որից շուրջ 90%-ը՝ Սևան և Դիլիջան:

Էկոզբոսաշրջությունից ստացված եկա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Էկոզբոսաշրջիկների թիվը Հայաստանում 2015-2018 թթ.[8]

Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)	*2015*	*2016*	*2017*	*2018*
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	288	635	802	1500
«Զանգեզուր» կենսոլորտային համալիր	402	421	1039	1122
«Սևան» ազգային պարկ (7 լողափեր)	300000	320000	350000	250000
«Դիլիջան» ազգային պարկ	100000	100000	100000	120000
«Արփի լիճ» ազգային պարկ	0	110	1200	3300
«Զիկատար» բնապահպանական կենտրոն	200	250	290	340
Արգելոցապարկային համալիր Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ	0	0	23264	36530
Զբոսաշրջիկների ընդհանուր թիվը ԲՀՊՏ-ներում	**400890**	**421416**	**476595**	**412792**
Ներգնա զբոսաշրջիկների թիվը Հայաստանում	**1192120**	**1259657**	**1494779**	**1651782**
Ներքին զբոսաշրջիկների թիվը Հայաստանում	**871888**	**979968**	**1086707**	**1092322**

[5] «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2006 թ. նոյեմբերի 27-ին:

[6] ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N1059-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZIPVB1H-dD778KWYVPOB9gkHMPW-flzAYrEh_RCKct51pJ4VyeNfio

[7] Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2017 թվականին և ցուցանիշների 2013-2017 թթ. շարժընթացը, էջ 14, https://www.armstat.am/file/article/eco_booklet_2017.pdf

[8] Տվյալները տրամադրել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոզբոսաշրջության աջակցության և զարգացման բաժինը:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Էկոզբոսաշրջությունից ստացված եկամուտները Հայաստանում (հազ. դրամ)[9]

Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)	*2015*	*2016*	*2017*	*2018*
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	669000	2356000	2034500	2550000
«Զանգեզուր» կենսոլորտային համալիր	185000	20000	3748000	1686000
«Սևան» ազգային պարկ (7 լողափեր)	-	-	-	-
«Դիլիջան» ազգային պարկ	810000	422000	181000	52000
«Արփի լիճ» ազգային պարկ	0	215000	500000	1000000
«Զիկատար» բնապահպանական կենտրոն	1246000	2845000	1790500	1160000
Արգելոցապարկային համալիր Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ	անվճար	անվճար	4652800	10405000
Ընդամենը	**2910000**	**5858000**	**12921200**	**16853000**

մուտներն արտացոլված են աղյուսակ 2-ում:

Աշխատանքներ են կատարվում Տաթև, Ջերմուկ ազգային պարկերի, Բեզոար մասնավոր պահպանավայրի ստեղծման ուղղությամբ:

1997 թ. ստեղծվեց Հայաստանի էկոտուրիզմի ասոցիացիան՝ միավորելու մարդկանց, որոնք զբոսաշրջության այդ ձևը համարում են երկրի կայուն զարգացման միջոց: Ընկերակցության նպատակը Հայաստանի բնական և պատմամշակութային ժառանգության պահպանմանը, էկոզբոսաշրջությամբ բարեկեցության մակարդակի բարձրացմանը աջակցելն է[10]:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) գործում է 2002 թ.-ից՝ որպես Բնության պահպանության միջազգային միավորման անդամ: Վերջինիս առաքելությունը Հայաստանի բնական բացառիկ ժառանգության և կենսաբազմազանության պահպանության, բնապահպանական խնդիրների և բնության պահպանության կարևորության մասին հանրային իրազեկումն է, որի համատեքստում նպատակ է հետապնդվում մարդ-վայրի բնություն հակամարտության և դրա հետևանքների նվազեցմամբ կրճատել կենդանական և բուսական աշխարհի վտանգված տեսակների անհետացման ռիսկերը: Հիմնադրամի գործունեությունն իրականացվում է նորագույն տեխնոլոգիաների և ժամանակակից մոդելների կիրառմամբ: Հիմնվել է բնապահպանական կրթության ցանցը, որում ընդգրկվել են ավելի քան 2000 երեխա, պատանի ու երիտասարդ Հայաստանի բոլոր մարզերից: Հիմնադրամը կազմակերպում է նաև միջոցառումներ՝ միտված գյուղական հեռավոր բնակավայրերում կարևոր ենթակառուցվածքների, զբաղվածության հնարավորությունների ստեղծմանն ու զարգացմանը: Հիմնադրամի ամենամյա բնապահպանական միջոցառումներն ընդգրկում են Հայաստանի ողջ տարածքը՝ ապահովելով տարիքային և սոցիալական տարբեր խմբերի ներգրավվածություն[11]:

2015 թ. ՀՀ բնապահպանության (այժմ՝ շրջակա միջավայրի) նախարարությունում բացվեց Էկոզբոսաշրջության աջակցության և զարգացման բաժինը, որը պատասխանատու է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում զբոսաշրջության այդ ձևի խթանման համար: Բաժինը մշակել է ԲՀՊՏ-ներում էկոզբոսաշրջության զարգացման երթուղիներ, մասնավորապես՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցում՝ 5 (հյուրատներ, հանգստի տաղավարներ, դիտակետեր, բնության թանգարան, վրանատեղիներ, թիերով երթուղիներ), Զանգեզուր կենսոլորտային համալիրում՝ 13 (ճամբարակայան, հյուրատուն), Սևան ազգային պարկում՝ 4 (7

[9] Տվյալները տրամադրել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Էկոզբոսաշրջության աջակցության և զարգացման բաժինը:

[10] The Armenian Ecotourism Association, http://www.ecotourismarmenia.com/pages/armecas.htm

[11] Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ, http://www.fpwc.org/hy/

հանրային լողափ, թանգարան, նավարկություն), Արփի լիճ ազգային պարկում՝ 4 (հյուրատներ, թանգարան, նավարկություն), Դիլիջան ազգային պարկում՝ 12, Ձիկատար բնապահպանական կենտրոնում՝ 4 (հյուրատուն, հանքային բուժիչ ջուր) երթուղի[12]: Այժմ այս երթուղիների հանդեպ պահանջարկն այնքան էլ մեծ չէ, սակայն էկոզբոսաշրջության աջակցության և զարգացման բաժինը համագործակցում է զբոսաշրջային գործակալությունների հետ՝ երթուղիները նրանց կողմից զբոսաշրջիկներին ներկայացնելու ուղղությամբ: Բացի դրանից, աշխատանքներ են կատարվում նոր երթուղիներ մշակելու ուղղությամբ:

Այսպիսով՝ էկոզբոսաշրջության զարգացման համար կան բոլոր անհրաժեշտ ռեսուրսները՝ գեղատեսիլ լեռնային լանդշաֆտ, հարուստ բուսական և կենդանական աշխարհ, ալպյան մարգագետիններ, բարենպաստ կլիմայական պայմաններ, մշակութային մեծ ժառանգություն, 232 բնական հուշարձան, երկրի տարածքի 13%-ի չափով բնության հատուկ պահպանվող տարածքներ և այլն:

Էկոզբոսաշրջության զարգացման խոչընդոտներից են ենթակառուցվածքների վատ որակը, տեղեկատվական վահանակների անմխիթար վիճակը, բնության աղտոտումը մարդկանց կողմից, էկոտուրերի նկատմամբ ոչ մեծ պահանջարկը, տեղի բնակիչների և զբոսաշրջիկների՝ էկոերթուղիների մասին քիչ տեղեկացվածությունը, էկոզբոսաշրջության զարգացման ռազմավարության բացակայությունը, հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը բնության և զբոսաշրջության վրա, անտառահատումները, կենդանիների և բույսերի անհետացման վտանգը և այլն:

Էկոզբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը. նոր ԲՀՊՏ-ների ստեղծում, էկոզբոսաշրջային նոր երթուղիների մշակում, էկոտուրերի ներառում զբոսաշրջային փաթեթներում՝ հեծանվային, ձիավարության, կենդանիներին և թռչուններին դիտելու և այլ գործողությունների ընդգրկմամբ, էկոզբոսաշրջային վայրերում հյուրատների կառուցում, էկոզբոսաշրջային տեղեկատվական վահանակների վիճակի բարելավում, բնության աղտոտման խնդիրների լուծում, բնակչության էկոկրթության և գիտակցության մակարդակի բարձրացում, էկոզբոսաշրջության խթանման մարքեթինգային գործողությունների իրականացում և այլն:

Բնության հանդեպ սերը պետք է սերմանել մանկուց, ինչն էլ կնպաստի համապատասխան էկովարքագծի ձևավորմանը: Ուստի կարևորագույն քայլ է նաև դպրոցներում այս ուղղությամբ դասընթացների (որոշ դասեր կարող են անցկացվել նաև բնության գրկում, որտեղ աշակերտներին կներկայացնեն, օրինակ, «Կարմիր գրքում» գրանցված բուսատեսակները), ինչպես նաև մանկական էկոտուրերի կազմակերպումը:

Էկոզբոսաշրջությունը միջոց է, որով փորձում ենք պահպանել բնությունը, բնական ռեսուրսները, մարդկանց մեջ ձևավորել համապատասխան բնապահպանական վարքագիծ՝ բարձրացնելով նրանց էկոկրթվածության ու գիտակցության մակարդակը՝ բնությունը խնամելու և ոչ թե վնասելու առումով: Հետևաբար՝ էկոզբոսաշրջության զարգացումը, ընդհանուր առմամբ, կնպաստի ոչ միայն գյուղական, այլև տարածքային համաչափ զարգացմանը, տեղի համայնքները կապահովի այլընտրանքային զբաղվածությամբ և հնարավոր եկամուտներով, կբարձրացնի բնակչության բարեկեցության, բնապահպանական կրթվածության, բնական ակտիվների պահպանության մակարդակը և կունենա այլ բարերար ազդեցություններ:

[12] Էկոտուրիստական ուղեցույց, Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, Հայաստանի Հանրապետություն բնապահպանության նախարարություն, Երևան, 2018, էջ 1-60:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էկոտուրիստական ուղեցույց, Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, Հայաստանի Հանրապետություն բնապահպանության նախարարություն, Երևան, 2018, էջ 1-60:
2. Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2017 թվականին և ցուցանիշների 2013-2017 թթ. շարժընթացը, էջ 14, https://www.armstat.am/file/article/eco_booklet_2017.pdf
3. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2006 թ. նոյեմբերի 27-ին:
4. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N1059-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZlPVB1H-dD778K-WYVPOB9gkHMPWflzAYrEh_RCKct51pJ4VyeNfio
5. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ, http://www.fpwc.org/hy/
6. Костюкович В. Г., Терещенко О. А., Тенденции развития экологического туризма. Научно-методический электронный журнал «Концепт». 2017, т. 39, с. 3891–3895, http://e-koncept.ru/2017/971105.htm
7. Québec declaration on ecotourism, https://www.gdrc.org/uem/eco-tour/quebec-declaration.pdf
8. Transport-related CO2 Emissions of the Tourism Sector – Modelling Results, p. 12, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284416660
9. The Armenian Ecotourism Association, http://www.ecotourismarmenia.com/pages/armecas.htm
10. What is Sustainable Tourism?, Naturefriends International, Baumgartner C., Nachhaltigkeit im Tourismus: Von 10 Jahren Umsetzungsversuchen zu einem Bewertungssystem. Studienverlag: Vienna, 2008, p. 3.

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ЭКОТУРИЗМ: ВАЖНОСТЬ ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРИРОДЫ И ЧЕЛОВЕКА

Экотуризм - это ответственный туризм на особо охраняемых природных территориях (ООПТ), который способствует сохранению окружающей среды и благосостояния местного населения. Экотуризм - это средство, с помощью которого мы стремимся сохранить природу, природные ресурсы и развивать соответствующее экологическое поведение у людей. В статье рассматриваются сущность, значение экотуризма, представлено состояние экотуризма в РА, необходимая ресурсная база для развития. Обсуждены проблемы и основные направления развития экотуризма.

Ключевые слова: *экотуризм, природа, экологическое поведение, экоотель, особо охраняемые природные территории*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at "Amberd" Research Center, ASUE, PhD in Economics

MARKETS AND COMPETITION

ECO-TOURISM: THE IMPORTANCE OF THE INTERACTION OF NATURE AND HUMAN

Eco-tourism is responsible tourism in specially protected nature areas (SPNA), which contributes to the preservation of the environment and well-being of the local population. Eco-tourism is a means by which we try to preserve nature, natural resources, and develop appropriate environmental behavior in humans. The paper discusses the essence and importance of eco-tourism, presents the current state of eco-tourism in the RA, the necessary resource base for development. The problems and main ways of eco-tourism development are discussed.

Keywords: *eco-tourism, nature, environmental behavior, eco-hotel, specially protected nature areas*